ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՃԱՄԲԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
РА ГЕГАРКУНИКСКАЯ ОБЛАСТЬ ЧАМБАРАКСКАЯ ГОРОДСКАЯ МЭРИЯ
REPUBLIC OF ARMENIA GEGHARKUNIK DISTRICT CHAMBARAK
COUNSUL
08100711

/0265/2 22 55
chambarakcityhall@rambler.ru

N

«17».07. 2012թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
պ-ն Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ

Հարգելի մարզպետ

Ձեզ է ներկայացվում Ճամբարակ քաղաքային համայնքի ավագանու 29.06.2012 թվականի թիվ 3 նիստի N 10-Ն, N 11 -Ա, N -12- Ա, N -13- Ա, N -14- Ա և N -15- Ա որոշումները:

Առդիր՝ 8 թերթ:

Համայնքի ղեկավար Յու.Ավայան

Կատ. Ֆ.Սարգսյան

Գրանցված է քաղաքապետ...
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ
23 07 2012թ
Մուտք թիվ 3615-12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ
ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ճամբարակ համայնք,Գ. Նժդեհի 125 Հեռ (265) 22255 էլ.փոստ
chambarakcityhall@rambler.ru

# ՕՐԱԿԱՐԳ

«29» հունիսի 2012թ. N 3

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՒ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ “ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ” ՓԲԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4 ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՅԱԿԱՌՈՒՅՑ ՀԱՏՎԱԾԸ ՀԱՅ-ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԹԵՄԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5. ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ԼՈՒԾԱՐՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 1 ԽՄԲԱՅԻՆ ԵՎ ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ ՄԵՐՁԱԿԱ ՏԱՐԱԾՔՈՎ “ՊՐԻՄ” ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6. ՎԱՐԴԱՆ ՄԱԹԵՎՈՍԻ ԲՈՐՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒ.ԱՎԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ճամբարակ համայնք,Գ. Նժդեհի 125 Հեռ (265) 22255 էլ.փոստ
chambarakcityhall@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 29» հունիսի 2012թ. N 10-Ն**

## ՀԱՄԱՅՆՔԻ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերի դրույթներով

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

Թույլատրել

1. 11 բաժնի 01 խմբի 02 դասի 51 ծրագրի " ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ" դասակարգման 4891 "Պահուստային միջոցներ հաշիվը պակասեցնել 3442000 /երեք միլիոն չորս հարյուր քառասուներկու հազար / դրամով, 2305000 /երկու միլիոն երեք հարյուր հինգ հազար/ դրամը հատկացնել

ա/ 01 բաժնի 01 խմբի 01 դասի "Օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում" դասակարգման 5113 "Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում" հաշվին 605000 /վեց հարյուր հինգ հազար/ դրամը քաղաքապետարանի շենքի կապիտալ վերանորոգման համար.

բ/ 08 բաժնի 01 խմբի 01 դասի "Հանգստի և սպորտի ծառայություն" դասակարգման 5113 "Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգման" հաշվին 1700.000 /մեկ միլիոն յոթ հարյուր հազար/ դրամ կենտրոնական այգու վերանորոգման համար.

2.1137000 /մեկ միլիոն մեկ հարյուր երեսունյոթ հազար/ դրամը ավելացնել

ա/ 01 բաժնի 06 խմբի 01 դասի "Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ" դասակարգման 4819 "Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին" հաշվին 150000 /մեկ հարյուր հիսուն հազար/ դրամ

բ/ 04 բաժնի 02 խմբի 01 դասի "Գյուղատնտեսություն" դասակարգման 4235 "Կառավարչական ծախսեր" հաշվին 22000 /քսան երկու հազար/ դրամը խորհրդատվական ծառայություններ մատուցելու նպատակով.

գ/ 08 բաժնի 01 խմբի 01 դասի "Հանգստի և սպորտի ծառայություն" դասակարգման 4269 "Հատուկ նպատակային նյութեր" հաշվին 80000 /ութանասուն հազար/ դրամ համայնքի ֆուտբոլի մրցաշարի կազմակերպելու համար.

դ/ 09 բաժնի 01 խմբի 01 դասի "Նախադպրոցականկրթություն" դասակարգման 4239 "ընդհանուր բնույթի այլ ծառայություններ" հաշվին 385000 /երեք հարյուր ութանասուն հինգ հազար/ դրամ թիվ 3 մանկապարտեզին գազի սպասարկման և վճարի համար.

ե/ 10 բաժնի 07 խմբի 01 դասի "Սոցիալական հատուկ արտոնություններ" դասակարգման 4729 "Այլնպաստներ բյուջեից" հաշվին 500000 /հինգ հարյուր հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ –(7) Դեմ -(0) Ձեռնպահ- (0)

Վ.ԱԴԱՄՅԱՆ Ն. ՍԵՎԱՆՅԱՆ

Կ.ԲԱԼՅԱՆ Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ.ԽԵՇՈՅԱՆ Ա.ՋԱՋՅԱՆ

Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒ.ԱՎԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ճամբարակ համայնք,Գ. Նժդեհի 125 Հեռ (265) 22255 էլ.փոստ
chambarakcityhall@rambler.ru

## ՈՐՈՇՈՒՄ

**« 29» հունիսի 2012թ. N 11-Ա**

## ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՒ ԿՈՅՈՒՂՈՒ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ "ՀԱՅՋՐՄՈՒՂԿՈՅՈՒՂԻ" ՓԲԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի դրույթներով, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ճամբարակ քաղաքային

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Ճամբարակ քաղաքի համայնքային սեփականություն հանդիսացող մատակարարվող խմելու ջրի 698100/վեց հարյուրիննսունութ հազար հարյուր/ դրամ, ջրահեռացման 109200 /հարյուր ինը հազար երկու հարյուր/ դրամ հաշվեկշռային արժողության համակարգերը մինչև 2035 թվականի հուլիսի 1-ը ՀՀ կառավարության կողմից հաստատված "Անշարժ գույքի անհատույց օգտագործման" պայմանագրով հանձնել "Հայջրմուղկոյուղի" փակ բաժնետիրական ընկերությանը:

2. Ճամբարակի քաղաքային համայնքի ղեկավար՝ պարոն Յու. Ավալյանին

Սահմանված կարգով ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան սպասարկման գրասենյակում "Հայջրմուղկոյուղի" ՓԲԸ գլխավոր տնօրենի հետ կնքել սույն որոշման 1-ին կետում նշված /Պայմանագիրը/ կամ դրանց կնքման գործարքը իրականացնելու համար լիազորել իրավասու անձի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ -(7) Դեմ -(0) Ձեռնպահ-(0)

Վ.ԱԴԱՄՅԱՆ Ն. ՍԵՎԱՆՅԱՆ

Կ.ԲԱԼՅԱՆ Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ.ԽԵՉՈՅԱՆ Ա.ՔԱՋՅԱՆ

Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒ.ԱՎԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ճամբարակ համայնք,Գ. Նժդեհի 125 Հեռ (265) 22255 էլ.փոստ
chambarakcityhall@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 29» հունիսի 2012թ. N 12-Ա**

### ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎՈՂ ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻՑ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, 32-րդ հոդվածի 12-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Թույլատրել համայնքի ղեկավարին

Թիվ 2 մանկապարտեզի շենքից 36 քմ տարածք՝ վարձակալական հիմունքներով, տրամադրել կրթական և մշակութային ծրագրեր իրականացնելու համար:

Տարեկան վարձավճարի մեկնարկային գինը 100000 /հարյուր հազար/ դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ –(7 ) Դեմ -(0) Ձեռնպահ –(0)

Վ.ԱԴԱՄՅԱՆ Ն. ՍԵՎԱՆՅԱՆ

Կ.ԲԱԼՅԱՆ Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ.ԽԵՉՈՅԱՆ Ա.Գ[illegible]ՅԱՆ

Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒ.ԱՎԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ճամբարակ համայնք,Գ. Նժդեհի 125 Հեռ (265) 22255 էլ.փոստ
chambarakcityhall@rambler.ru

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**« 29» հունիսի 2012թ. N 13-Ա**

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿՑԱԿԱՌՈՒՅՑ

ՀԱՏՎԱԾԸ ՀԱՅ.ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԹԵՄԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետով 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հաշվի առնելով, որ Հայ, Առաքելական եկեղեցի Գեղարքունիքի թեմը ցանկություն է հայտնել համայնքում իրականացնել հոգևոր, ազգային, սոցիալական, կրթական, բնապահպանական և այլ բնույթի ծրագրեր և այն ծառայացնել անչափահասների դաստիարակությանը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Նկատի ունենալով, որ Հայ-Առաքելական եկեղեցի Գեղարքունիքի թեմը պարտավորվում է վերանորոգման աշխատանքները իրենց միջոցներով կատարել, ուստի

Թույլատրել համայնքի ղեկավարին

1. Համայնքի կենտրոնական գրադարանի կցակառույց հատվածը՝ 129.4քմ. ընդհանուր մակերեսով, անհատույց օգտագործման համար տրամադրել Հայ. Առաքելական Սուրբ եկեղեցի Գեղարքունիքի թեմին՝ 50 տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ –(7 ) Դեմ -(0) Ձեռնպահ-(0)

Վ.ԱԴԱՄՅԱՆ Ն. ՍԵՎԱՆՅԱՆ

Կ.ԲԱԼՅԱՆ Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ.ԽԵՉՈՅԱՆ Ա.ՋԱՋՅԱՆ

Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒ.ԱՎԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ճամբարակ համայնք,Գ. Նժդեհի 125 Հեռ (265) 22255 էլ.փոստ
chambarakcityhall@rambler.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**« 29» հունիսի 2012թ. N 14-Ա**

ՀԱՄԱՅՆՔԻ ԹԻՎ 4 ԼՈՒԾԱՐՎԱԾ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ

1 ԽՄԲԱՅԻՆ ԵՎ ԽՈՀԱՆՈՑԱՅԻՆ ՄԱՍՆԱՇԵՆՔԸ

ՄԵՐՁԱԿԱ ՏԱՐԱԾՔՈՎ "ՊՐԻՄ" ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 12-րդ կետով, 16-րդ հոդվածի 20-րդ կետով և հաշվի առնելով, որ "Պրիմ" համայնքային զարգացման հիմնադրամի նպատակն է համայնքի ընդհանուր զարգացումը խթանելը կրթական, տնտեսական և սոցիալական ոլորտների ծրագրերի միջոցով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է

Քանի որ "Պրիմ" համայնքային զարգացման հիմնադրամը պարտավորվում է ամբողջությամբ վերանորոգել մասնաշենքերը և բարեկարգել մերձակա տարածքը, ուստի

Թույլատրել համայնքի ղեկավարին.

1. Համայնքի թիվ 4 լուծարված մանկապարտեզի 1 խմբային և խոհանոցային մասնաշենքը մերձակա տարածքով, անհատույց օգտագործման տրամադրել "Պրիմ" համայնքային զարգացման հիմնադրամին /25 տարի ժամկետով/, պայմանով, որ տարածքը ծառայեցվի համայնքի երեխաների կրթական զարգացման նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ –(7) Դեմ -(0) Ձեռնպահ – (0)

Վ.ԱԴԱՄՅԱՆ Ն. ՄԵՎԱՆՅԱՆ

Կ.ԲԱԼՅԱՆ Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ.ԽԵՉՈՅԱՆ Ա.ՋԱՋՅԱՆ

Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒ.ԱՎԱԼՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՃԱՄԲԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ճամբարակ համայնք,Գ. Նժդեհի 125 Հեռ (265) 22255 Էլ.փոստ
chambarakcityhall@rambler.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 29» հունիսի 2012թ. N 15-Ա

ՎԱՐԴԱՆ ՄԱԹԵՈՍԻ ԲՈՐՅԱՆԻՆ ԲՆԱԿԱՐԱՆԻ ԿԱՐԻՔԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթներով և հաշի առնելով. որ Վ. Բորյանը՝ ընտանիքով /4 անձ/ բնակվում է զոքանչի հետ միասին, նրա մեկ սենյականոց բնակարանում.

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈւՄ Է՝

1. Ճամբարակ քաղաքի բնակիչ Վարդան Մաթևոսի Բորյանին ճանաչել որպես բնակարանի կարիքավոր:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

կողմ -(7) Դեմ -(0) Ձեռնպահ -(0)

Վ.ԱԴԱՄՅԱՆ Ն. ՍԵՎԱՆՅԱՆ

Կ.ԲԱԼՅԱՆ Գ.ԽԱՉԱՏՐՅԱՆ

Թ.ԽԵՉՈՅԱՆ Ա.ՋԱՋՅԱՆ

Ն.ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՅՈՒՐԻԿ ԱՎԱԼՅԱՆ

Աշխատակազմի քարտուղար ՖԼՈՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ